

# ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏ. Հ. ՊԱՊՈՅԱՆ, Պարույր Սևակի չափածոյի բառարան, ՀՀ. 1, 2, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 1981, 1982:

Դարերի արգասավոր ուղի անցած հայ բառարանագրութիւնը իր ստեղծած արժեքների տեսակարար կշռով անցյալում ետ չի մնացել ժամանակի գիտօրյան ընդհանուր ընթացքից: Մեր օրերում ևս հայ բառարանագրութիւնը շարունակում է իր ընթացքը: Յարացնելով անցյալի նվաճումները՝ սովետական շրջանում ստեղծվեցին և շարունակում են ստեղծվել բառարանայր բառարաններ (մասնագիտական, բացառական, քարզմանական, տեղիէրարանական, դարձվածաբանական, ուղղագրական, ուղղախոսական և այլն), որոնց մի մասի առկայութիւնը անհրաժեշտ նախադրյալներ կարող է ապահովել տեսական նորանոր ուսումնասիրութիւնների, ինչպես նաև գործնական ձեռնարկների և գիտանասագոտական այլևայլ աշխատանքների համար: Այս ամենով հանդերձ, հայ բառարանագրութիւնը ակնհայտորեն ետ է մնում ինչպես մի շարք, այնպես էլ ճեղհեակային բառարանների ստեղծման բնագավառում: Այս իմաստով միանգամայն ողորնելի է դրոցնեա Արտ. Պապոյանի նորերս լույս ընծայած «Պարույր Սևակի չափածոյի բառարանը» (երկու հատորով). որք նրա երկար տարիների փրտնաշուն աշխատանքի արդյունքն է:

Այսպիսի բառարանի ստեղծումը Արտ. Պապոյանի կողմից պատահական չէ: Նա շատ վաղուց է իրեն նվիրել Պ. Սևակի չափածոյի խոսքարվեստի փնտրութեան: Ի թիվս բազմաթիվ այլ ուսումնասիրութիւնների, դեռևս 1970 թ. նա հրատարակեց «Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը» գիրքը, ապա՝ 1971 թ.՝ առաջիկ մտքողական մենագրական հետազոտութիւն՝

«Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը» խորագրով:

Սույն բառարանը այդ աշխատանքի տրամաբանական շարունակութիւնն է, իրոք ծանրակշիռ մի գործ՝ շարադրված բանիմաց մասնագետի հմտությամբ, նյութի խոր իմացությամբ:

Հակիրճ առաջաբանում խոսելով նման ձեռնարկման անհրաժեշտութեան մասին, ճեղհեակն իրավացիորեն գրում է. «Նման բառարանների ստեղծման անհրաժեշտութիւնը դառնում է հրամայական, երբ մշակույթի տվյալ գործի ունեցած ավանդները հայտնի չափով նպաստ են մտնում նաև լեզվի զարգացման ասպարեզում:

Պարույր Սևակը պատկանում է վերջիններիս թվին» (հ. 1, էջ 5):

Գրախոսվող բառարանն ընդգրկում է Պ. Սևակի ինքնուրույն չափածո ստեղծագործութեան ամբողջ բառապաշարը: Վիճակագրական փնտրութեամբ ճեղհեակը բացահայտում է հետևյալ տրվյալները: Ինքնուրույն ստեղծագործութիւններում գործածված բառերի թիվը՝ կազմում է շուրջ 14200, իսկ քարզմանական երկերում՝ 3100, ընդամենը՝ 17300, այն դեպքում, երբ քստ ուսումնասիրողների տվյալների, Հովհերասի «Իրիկականի» և «Ողիսականի» բառերի ընդհանուր փառակը կազմում է մոտ 9000, Մ. Խորենացունը՝ 7031, Գ. Նարեկացու «Մատոյան ողբերգութեան» պոեմինը՝ 8962, Բաֆֆու «Մամվել» վեպինը՝ 7718, Հ. Քումանյանի ամբողջ գեղարվեստական քստեղծագործութեանը՝ 9000, Ավ. Իսահակյանի չափածոյինը՝ 5200, Ե. Զարեցի չափածոյինը՝ 7500:

Պ. Սևակի ամբողջ չափածոյի բառերի ընդհանուր թիվը, կրկնվող բառերի հետ միասին, կազմում է 148,822, կրկնութեան ցուցիչը՝ 10,48, որ քավականին ցածր է գեղարվեստական գրականութեանը համար սահմանված միջին ցու-

<sup>2</sup> Նկատի չեն առնված կրկնվող բառերը և հատուկ անունները:

<sup>3</sup> Այստեղ գործածված բառերը ընդգրկված են III հատորում:

<sup>1</sup> Կատարված աշխատանքներից են՝ Խ. Կանայան, Ավ. Իսահակյանի բանաստեղծութիւնների լեզուն, Եր., 1940 (այստեղ տրված է «Արու-Նալա Մահարի» պոեմի բառարանը), Ա. Կ. Փաշայան, Սայաթ-Նովայի հայերեն խոսքի բառարան, Եր., 1962, Լ. Պետրոսյան, Հովհ. Քումանյանի գեղարվեստական երկերի բառարան, Եր., 1976 և այլն:

ցիչից: Սա, ինքնին վերցրած, բանաստեղծի բառապաշարի ընդհանուր հաշվեկշռի մեծ արժանիքներին մեկն է:

Բառապաշարի արտակարգ հարստությամբ Պ. Սևակի ստեղծագործություններից առանձնահատուկ է «Անլուծի գանգալատուն» պոեմը, որի տարբեր բաների ընդհանուր թիվը, բառարանագրի տվյալներով՝ 6091 է: Ամբողջ հայ գրականության մեջ համանման երկերից իր բառապաշարով այդ թիվը մի փոքր գերազանցում է միայն Գր. Լառնիկացու «Մատյան ողբերգության» պոեմը, որը, սակայն, ծավալով մոտ երկու անգամ մեծ է «Անլուծի գանգալատունից»:

Պ. Սևակը ստեղծել է կիրառել է մոտ 1150 նոր բաղադրյալ բառեր, որոնց մի զգալի մասը արդեն արձանագրվում է բառարաններում: Անցյալի հեղինակներից այսպիսի նորարարությամբ ամենից ավելի աչքի է ընկել Գր. Լառնիկացին՝ ստեղծելով շուրջ 700 նոր բառ:

Պ. Սևակի շափածոյի բառապաշարի վերահիշյալ վիճակագրական պատկանելի թվերը իրոք որ վկայում են նրա լեզվի արտակարգ ճոխության ու հարստության մասին: Եվ այդ ճոխությունն ու հարստությունը գիտականորեն բացահայտված ու ցուցադրված են Ա. Պապոյանի՝ ծանր ու մեղավաչան, շեղահակալ աշխատանքի պտուղը հանդիսացող սույն բառարանում:

Բանաստեղծը խորապես տիրապետելով գրաբարին, միջին հայերենին, ժամանակակից արեւելյանայ և արևմտահայ գրական լեզուներին՝ հմտորեն օգտվել է մեր ազգային բառապաշարի տարբեր շերտերից. հայերենի իմաստաբանական, ռեալիստական և բյուրեղական լայն հնարավորություններից. որտեղ իսկ զգալի շափով նպաստել մեր բանաստեղծական լեզվի զարգացմանը. ուղեհղել նրա հեռանկարները:

Սույն բառարանը իր ընդգրկվածներով հնարավորություն է տալիս ընթերցողին ըստ ամենայնի բազմակողմանիորեն ճանաչելու Պ. Սևակի շափածոյի բառապաշարի ողջ հարստությունը, այլև հարուստ նյութ ընձեռում մեր գեղարվեստական խոսքի համեմատական փնտրության, լեզվաբանական այլևայլ ուսումնասիրությունների համար: Առաջադրվում մանրամասնորեն (31 կետերով) շարադրված են այն բոլոր սկզբունքները, որոնք վերաբերում են բառարանի կառուցվածքին: Իր բնույթով բառարանը բացատրական է: Գլխաբանորեն օժտված են ֆեռականական-ռեալիստական, իմաստաբանական բրնուրագրումներով. բնագրային վկայություններով, ինչպես նաև բաների հանախակառույցայն նշումով, որ նորություն է այս կարգի բառարանի համար և առավել ևս մեծացնում է նրա արժեքը:

Մյուս կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ բառարանների և նրանց ներքառնակների կառուցման բացառությամբ, ինչպես նաև

ֆեռականական-ռեալիստական և այլ կարգի բնութագրումները տալիս հեղինակը հիմք է ունեցել ոչ միայն հրատարակի վրա եղած հայերեն և օտար բազմաթիվ ու բազմաբնույթ բառարաններ, այլև առաջին հերթին և ամենից շատ՝ «...գրողի բանաստեղծական բնագիրը, բառի տվյալ բնագրում ստացած իմաստն ու արժեքը» (հ. 1, էջ 14):

Բառարանը ավելի կատարյալ տեսելու ցանկությամբ կուզեինք նշել մեր մի քանի դիտողությունները: Այն գերծ չէ մասնակի վրիպումներից, վիճելի հարցադրումներից: Սկսենք վերջինից.

1. Մի՞թե անխուսափելի անհրաժեշտություն է նմանատիպ բոլոր բառարաններում, ինչպես սովորական բացատրական բառարաններում, գլխաբաների իմաստաբանական բնութագրումների ժամանակ բացատրություններով օժտել մեծաճանկ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ազնավ, աղամանդ, աղբյուր, այբուրեն, բերան, գերեզման, դեկտմեր (առհասարակ բոլոր ամիսների անունները), դեղատուն, եղչելու (առհասարակ բոլոր կենդանիների անունները), ընկուզենի (առհասարակ բոլոր բուսանունները), թեյ, ինժեներ, իսկ (առհասարակ բոլոր շաղկապները), համբույր, հյուսուհու, մեղալ, մեծատառ, շախմատ, շափար, սպանել, տանկ, ցեխաւրյուն, ֆեռի, ֆիթ և այլն և այլն, որոնք գործածված են իրենց սովորական իմաստներով, չեն դրսևորում ճեռական կամ իմաստային որևէ ներքառնակ, ընդհանրապես հազվադեպի են յուրաքանչյուր ընթերցողի: Անշուշտ, վերապահություն պիտի անել այնպիսի ստեղծագործողներին համար (օրինակ՝ Լաֆֆին), որոնք վերոնշյալներ են խաղացել մեր լեզվի պատմական զարգացման հանգուցային փուլերում:

2. Պ. Սևակի շափածոյում հանդիպում են բազմաթիվ գրաբար բայաններ, հոլովածներ, նախդրավոր կապակցություններ, որոնք տեղ են գտել բառարանում իբրև գլխաբաներ՝ ֆեռականական (հոլովի, թվի, դեմքի, ժամանակի ևն) համապատասխան նշումներով: Սակայն այս հարցում միօրինակությունը երբեմն խախտվում է: Եթե բայանների եզակի և հոգնակի թվի կարգերը հետևողականորեն նշվում են, ապա հոլովածների համար բաց են թողնվում երբեմն եզակի, երբեմն էլ՝ հոգնակի նշումները: Օրինակ՝ «Ձիհեկ (2), դ., (գրք.)» Անձնական դերանվան առաջին դեմքի եզ. գործ.-ը» (պիսի է լինել եզ. գործ.-ը զ նախդրով), «Ի թեկ (1), (գրք.)» Գուրբանվան բաց. հոլովը» (փոխանակ՝ եզ. բաց.-ը), «Ի թուրց (1), (գրք.)» Երկրորդ դեմքի ստացական դերանվան բաց.-ը» (փոխանակ՝ հոգնակ. բաց.-ը) և այլն:

3. Գրաբար թե՛ բառաների (բայան և ո՛չ բայան) եզակի ուղիղ ձևերը արված են մեր գրաբար, մեր ո՛չ գրաբար ձևով, ինչպես՝

«Հանձն (գրք.), Անձն-ի նախդրիվ ձեր», «Ան-  
ձանց, գ. (գրք.). Անձ-ի հոգև. սեռ-ը», «Առ-  
նուն, բ., (գրք.). Առնուլ-ի ներկա եզ. 3-րդ դժմ-  
քը», «Արասցե (2), բ., (գրք.). Արարելի-ի ապ.  
Եզ. 3-րդ դժմքը, «Ընկալ (1), բ. (գրք.). Ընկա-  
լելի-ի հրամ. Եզակիեն» և այլն: Մեր կարծիքով՝  
նիշտ կլինեն՝ նման բոլոր բառերի սկզբնաձևերը  
լինելի գրարար, ուրեմն՝ Անձն-ի և ո՛չ անձ-ի,  
տունելի (անև,-ի) և ո՛չ արարելի-ի, ընկալու  
լինկալու ( = ընդունել) -ի և ոչ ընկալելի-ի և  
այլն:

4. Չի կարելի չնկատել, որ առանձին դեպ-  
քերում բառերի իմաստաբերականության սահմա-  
նագատումները շարժազանցված են: Օրինակ՝ Հա-  
նուն բառի համար տրված են երկու իմաստա-  
յին նշումներ՝ «1. Մի բանի համար՝ նպատա-  
կով... 2. Ս սեր, համար, որևէ բանի սիրույն»,  
որոնց մեջ, բառ էություն, որևէ ներքերանգային  
տարբերություն չկա: Այդ են հաստատում վե-  
րոնիշյալ նշումների համար քերված վկայու-  
թյունները, որոնցում հանուն բառը միևնույն  
նպատակային հարաբերությունն է արտահայ-

տում, ինչպես՝ «...Ինչո՞ւ են նետվում, ի՞նչ քն-  
հուրոհում, Հանուն ի՞նչ բանի կյանքներ են գո-  
հում» (Ա. 358), «...Որոնցով ես քանի անգամ  
շոշափել եմ բունքը մահի՝ Հանուն այս խոր,  
պայծառ պահի» (Ա, 50):

Արված այս դիտողությունները, ինչպես աս-  
վեց, ունեն մասնակի բնույթ, երբեմն էլ բանա-  
վիճակ են և ամենևին չեն նեմացնում գրա-  
խոսվող բառարանի արժեքը:

Ի պատիվ բառարանի ճեղհնակի՝ պետք է ա-  
սել, որ նրան լիովին հաջողվել է երևան հանել  
բառերի այն բոլոր ամենաուրբ, երբեմն նույն-  
իսկ անորսալի իմաստային ներքերանգները, որոնք  
վկայված են մեր ժամանակի մեծ բանաստեղծ-  
ներից մեկի բնագրերում: Այսպիսով՝ բացահայտ-  
ված է Պարույր Սևակի բառապաշարի որակա-  
կան ու բանական ողջ հարստությունը:

Արտ. Պապոյանի սույն աշխատանքը իր  
հանդիսանում է իր տեսակի մեջ լավագույն բա-  
ռարաններից մեկը մեզանում:

Հ. ԱՎՅՏԻՍՅԱՆ

## Մ. Ե. ԱՍՍՏՐՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983, 470 էջ:

Ժամանակակից հայերենի ձևաբանության  
հարցերի բնությունը միշտ եղել և մնում է հայ  
ավանդական և հորագույն լեզվաբանության ու-  
սումնասիրության ամենահետաքրքիր ու բարդ  
խնդիրներից մեկը: Հատկապես վերջին տարիե-  
րին մեծ աշխատանք է կատարվել ինչպես ֆեռա-  
կանության մյուս բաժինների, այնպես և ձևա-  
բանության բազմաթիվ հարցերի ուսումնասիրու-  
թյան ուղղությամբ. յուրա են տեսել ոչ միայն  
խոսքի մասերի ուսումնաբեր, դրանց սահմանման  
ու դասակարգման, ձևաբանության տեսական այլ  
հարցերի, այլև ժամանակակից հայերենի հո-  
լովման ու խոնարհման համակարգին նվիրված  
բազմաթիվ ակնառու մենագրություններ ու ու-  
սումնասիրություններ:

Այս աշխատությունների մեջ իր ուշագրավ  
տեղն ունի պրոֆ. Մ. Ասատրյանի «Ժամանակա-  
կից հայոց լեզու» (Ձևաբանություն) աշխատու-  
թյունը, որը հանձնարարվում է որպես ուսում-  
նական ձեռնարկ բանասիրական ֆակուլտետի ու-  
սանողների համար: Այն ճեղհնակի երկար տա-  
րիների գիտական պրպտությունների ու տեղաշարժ  
աշխատանքի արդյունքն է, մի ամփոփ ուսում-  
նասիրություն, որի հիմնական դրայթներն ու  
եզրակացությունները հրատարակվել են միջև այդ  
(1970—77 թթ.) երեք գրքերով՝ «Ժամանակա-  
կից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» խո-  
րագրով:

Մեր կարծիքով, աշխատության արժեքավոր

կողմը նախ և առաջ այն է, որ նա ժամանա-  
կակից հայերենի ձևաբանության ամբողջական,  
համակողմանի ուսումնասիրություն է:

Չեղիճակի սովորածավալ աշխատության մեջ  
տալիս է հայերենի ձևաբանության տեսական  
բոլոր հարցերի բնությունը, իսկ ապա՝ խոսքի  
մասերից յուրաբանչյուրի ֆեռականական կար-  
գերի, նրանց առանձնահատկությունների ման-  
րամասն վերլուծությունն ու ամբողջական պատ-  
կերը:

Ներածական մասում բնկվում են ձևաբանու-  
թյան տեսական կարևորագույն մի շարք հար-  
ցեր, ինչպիսիք են՝ ֆեռականական իմաստ և ձև,  
նրանց փոխհարաբերությունը, ֆեռականական  
կարգեր, դրանց ըմբռնումն ու աճանաեումը, բա-  
ռի տարրալուծումը, ձևայթներ, բառերի ֆեռա-  
կանական ու բառակազմական խմբերը և այլն:  
Այս բաժնում հատկապես ուշագրության արժա-  
նի է խոսքի մասերի որոշման հիմունքների, նը-  
րանց դասակարգման, փոխանցումների բնու-  
թյունը, մի հարց, որ եղել և մնում է լեզվաբա-  
նության ամենարար պրոբլեմներից մեկը: Հե-  
ղիճակը հենվելով հայ լեզվաբանական տարբեր  
ուսումնասիրություններում տեղ գտած՝ հայերե-  
նի խոսքի մասերի դասակարգման գաղազան  
սկզբունքների վրա, իրավացիորեն գտնում է, որ  
ինչպես բարդ ֆեռականական կարգերի, այնպես  
էլ խոսքի մասերի ձևով հիմք առարկայական  
իրականությունն է, և որ բոլոր խոսքի մասն-